ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ

Լսվել է ԱԿՀ բաժնի թիվ 4 նիստում (26 նոյեմբեր 2021 թ.)

և երաշխավորվել է ներկայացնելու գիտական խորհրդին

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ և ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020-2021 թթ. ընթացքում արտաքին կապերին և համագործակցությանն առնչվող հիմնական գործողություններն իրականացվել են՝ հիմք ընդունելով ԳՊՀ արտաքին կապերի և համագործակցության (ԱԿՀ) բաժնի 2020-2021 թթ. գործողությունների ծրագիրը, որը մշակվել է բուհի 2019-2023թթ. ռազմավարական զարգացման ծրագրին համապատասխան: Ըստ այդ ծրագրի՝ արտաքին կապերի և համագործակցության բաժնի գերակա ուղղություններն են եղել՝

- բուհի ռազմավարական խնդիրներից բխող գործընկերային կապերի հաստատումը, նոր պայմանագրերի ու համաձայնագրերի կնքումը,
- բուհի ներքին շահակիցների համար կարճաժամկետ դասընթացների, հանդիպումների կազմակերպումը և մասնակցությունը գործընկեր հաստատություններում կազմակերպված միջոցառումներին,
- աշխատակիցների և ուսանողների շարժունության խթանումը,
- Էրազմուս+ ծրագրի շրջանակում կարողությունների զարգացմանը միտված ծրագրերի իրականացումը,
- ԳՊՀ պաշտոնական կայքում ԱԿՀ բաժնի գործունեության լուսաբանումը, օտարալեզու տեղեկատվության ծավալի մեծացմանն ուղղված քայլերի ձեռնարկումը:

Բուհի ռազմավարական խնդիրներից բխող գործընկերային կապերի հաստատում և նոր պայմանագրերի ու համաձայնագրերի կնքում: Բուհը հաշվետու ժամանակահատվածում ընդլայնել է համագործակցության աշխարհագրությունը՝ հաստատելով գործընկերային նոր հարաբերություններ հետևյալ համալսարանների ու կազմակերպությունների հետ.

2021թ. մարտի 3-ին ստորագրվել է համագործակցության պայմանագիր Իտալիայի Լաքվիլլայի համալսարանի ու ծրագրի 12 գործընկեր համալսարանների միջև՝ Erasmus+SAH /Կարողությունների զարգացում Ճարտարապետական ժառանգության կայունության համար/ ծրագրի շրջանակներում:

2021թ. ապրիլի 4-ին ստորագրվել է համագործակցության պայմանագիր Դրեզդենի տեխնիկական համալսարանի/ծրագրի համակարգող/ ու ծրագրի 14 գործընկեր համալսարանների միջև Erasmus+SMARTI/ Աջակցություն անգլերենի միջոցով դասավանդման նորարար մեթոդաբանությանը, մոտեցումներին և դասավանդման գործիքներին՝ կրթության արդյունավետությունը, շարունակականությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով/ ծրագրի շրջանակներում:

Բուհի ներքին շահակիցների համար կարճաժամկետ դասընթացների, հանդիպումների կազմակերպում և մասնակցություն գործընկեր հաստատություններում կազմակերպված միջոցառումներին: ԳՊՀ գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացման համար շեշտադրվել են ներքին շահակիցների համար կարճաժամկետ դասընթացների կազմակերպման կարևորությունը և բաժնի աշխատակիցների մասնակցությունը գործընկերների կողմից կազմակերպված միջոցառումներին: Ստորև ներկայացված են 2020-2021 թթ. ընթացքում բաժնի կամ գործընկեր հաստատությունների կողմից իրականացված այն միջոցառումները, որոնց մասնակցել են ԳՊՀ ներքին շահակիցները:

1. USAID World Learning (*Համաշխարհային ուսուցում*) կազմակերպության հետ առցանց հանդիպում- 2020 թ. սեպտեմբերի 2-ին, համաձայն նախապես ձեռքբերված պայմանավորվածության, ԳՊՀ ԱԿՀ բաժինը առցանց ձևաչափով հանդիպել է USAID World Learning-ի ամերիկացի ներկայացուցիչների հետ՝ միմյանց հետաքրքրությունները պարզելու և համագործակցության հնարավոր ուղիներ փնտրելու համար:
2. Էրազմուս+ BOOST (Հայաստանյան համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքեթինգի խթանում) ծրագրի ամփոփիչ «վիրտուալ» համաժողով- 2020 թ. հոկտեմբերի 12-ին Էրազմուս+ BOOST ծրագրի համակարգողի՝ Հայկական պետական մանկավարժական համալսարանի հրավերով ԳՊՀ-ից ԱԿՀ բաժնի ղեկավար Ն. Սաֆարյանը, բաժնի մասնագետ Ս. Ալավերդյանը և Օտար լեզուների ամբիոնի դասախոս Ն. Մեժլումյանը մասնակցել են ծրագրի ամփոփիչ «վիրտուալ» համաժողովին, որի ժամանակ խոսվել է ծրագրի ընթացքում բարձրագույն կրթության միջազգայնացմանն ուղղված որոշակի ձեռքբերումների, մասնավորապես՝ բարձրագույն կրթության հնգամյա ռազմավարության մշակման և դրա իրականացման գործողությունների ծրագրի, նորաստեղծ Study in Armenia էլեկտրոնային կայքի և այլնի մասին:
3. Թուրքադրբեջանաահաբեկչական կոալիցիայի սանձազերծած լայնամասշտաբ

պատերազմի մասին իրականության բարձրաձայնման համար բուհերի անելիքների մշակմանը միտված առցանց հանդիպում- Էրազմուս+ ազգային գրասենյակի նախաձեռնությամբ հոկտեմբերի 7-ին առցանց հարթակում կայացած հանդիպմանը՝ նվիրված արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով և հայ–ադրբեջանական շփման գծի որոշ հատվածներում Ադրբեջանի սանձազերծած լայնամասշտաբ ռազմական գործողությունների խնդրին, ԳՊՀ-ից մասնակցել են ԱԿՀ բաժնի աշխատակիցները: Քննարկման արդյունքում ստեղծել է խումբ, որը աշխատել է խնդրի բարձրաձայնման համար միջազգային հարթակներին իրազեկող մեկ միասնական տեղեկատվական նամակի մշակման ուղղությամբ: Նամակը վերջնական տեսքի բերելուց հետո այն ուղարկվել է միջազգային գործընկերներին՝ համապարփակ տեղեկություն տրամադրելով հակառակորդի կողմից կրթամշակութային հաստատությունների և քաղաքացիական այլ ենթակառուցվածքների թիրախավորման մասին՝ ցույց տալով ադրբեջանաթուրքաահաբեկչական կոալիցիայի ցեղասպան գործելաոճն ու նպատակները:

4. «Կոռուպցիայի կանխարգելումը» թեմայով դասընթաց- Շվեդիայի կառավարության աջակցությամբ և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի գործընկերությամբ Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից իրականացվող «Երիտասարդությունը հանուն հակակոռուպցիայի» ծրագրի հիմնական և խորացված ուսուցումների շրջանավարտ, ԳՊՀ «Իրավագիտություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Սահդա Օհանջանյանի ու ԳՊՀ ԱԿՀ բաժնի համատեղ ջանքերով 2020 թ. դեկտեմբերի 3-ին, 6-ին և 8-ին կազմակերպվել է առցանց դասընթացների շարք՝ նվիրված կոռուպցիայի սահմանմանը, դրսևորման ձևերին, կանխարգելմանը և հանրային ծառայողների գույքի, եկամուտների, շահերի ու ծախսերի հայտարարագրմանը: Դասընթացների նպատակն էր բարձրացնել երիտասարդության հակակոռուպցիոն ընկալման և գիտակցության մակարդակը:

5. Օտարերկրյա որակավորումների ճանաչման վերաբերյալ դասընթաց- 2020 թ. դեկտեմբերի 23-ին Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի (ENIC Armenia) կազմակերպած դասընթացին՝ «Փախստականների որակավորումների ճանաչում. քաղաքականություն և պրակտիկա» թեմայով, ԳՊՀ-ից մասնակցել է ԱԿՀ բաժնի մասնագետ Ս. Ալավերդյանը: Հանդիպմանը անդրադարձել են նաև «ՀՀ բուհերի կողմից իրականացվող օտարերկրյա որակավորումների և կարճաժամկետ ուսուցման/կրեդիտային շարժունության ճանաչում» հետազոտության արդյունքներին:

6. Էրազմուս+ «MODEST» (Գիտության ոլորտում հետբուհական կրթության արդիականացումը և դասավանդման մեթոդաբանության բարելավումը) ծրագրի շրջանակում առցանց վեբինարներ- 2021թ. հունվարի 25-ին, 26-ին և փետրվարի 4-ին Ն. Սաֆարանը և Ս. Ալավերդյանը մասնակցել են առցանց վեբինարների, որոնց ընթացքում անդրադարձ է եղել դոկտորական վերապատրաստման կենտրոնների ստեղծման նպատակին, ասպիրանտների վերապատրաստման խնդիրներին և կենտրոնների կողմից դրանց տրված լուծումներին, ասպիրանտական վերապատրաստման ծրագրերի մշակմանն ու թարմացմանը, կենտրոնի կառավարմանը, ակադեմիական և արդյունաբերական գործընկերների հետ փոխհարաբերությունների ստեղծմանն ու խթանմանը, դոկտորական վերապատրաստման կենտրոնների ցանցի ստեղծմանը և տեղեկատվության փոխանակմանը:

7. «Համագործակցային դոկտորական կրթություն. համալսարան-արդյունաբերություն գործընկերություն» թեմայով վեբինար- 2021 թ. փետրվարի 2-ին Ն. Սաֆարանը և Ս. Ալավերդյանը մասնակցել են Էրազմուս+ կարողությունների զարգացման ARMDOCT և MODEST ծրագրերի գործընկեր երկրներում դոկտորական կրթության կազմակերպման մեջ գործարար ոլորտի ներգրավվածության լավագույն փորձի, ազգային քաղաքականությունն ու կառուցակարգերի ուսումնասիրությանը նվիրված վեբինարին, որը կազմակերպվել էր այդ երկու ծրագրերի մասնակիցների համատեղ ջանքերով:

8. Էրազմուս+ «Շրջանավարտների աշխատունակությունը բարձրացնելու նպատակով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ներդրում Հայաստանի և Մոլդովայի բարձրագույն կրթության համակարգերում» (WBL4JOB) ծրագրի մեկնարկային հանդիպում- 2021 թ. փետրվարի 10-11-ը տեղի ունեցած WBL4JOB ծրագրի մեկնարկային առցանց հանդիպմանը ԳՊՀ-ից մասնակցել է Ս. Ալավերդյանը: Ծրագրի մեկնարկին նվիրված առցանց հանդիպման ժամանակ քննարկվել է ծրագրի իրականացման, ինչպես նաև աշխատանքի վրա հիմնված ուսումնառության մոդելի

մշտադիտարկման և հաշվետվողականության մեթոդաբանությունը:

9. Առաջնորդության զարգացման երկամյա ծրագրի վերաբերյալ իրազեկող հանդիպում- «Դասավանդի՛ր, Հայաստա՛ն» ծրագրի հավաքագրման թիմի ներկայացուցիչները 2020 թ. փետրվարի 24-ին առցանց եղանակով կայացած տեղեկատվական հանդիպմանը ԳՊՀ-ի ավարտական կուրսի ուսանողներին ներկայացրել են **Առաջնորդության զարգացման** երկամյա ծրագիրը, ծրագրին դիմելու կարգը: Հանդիպման մասնակիցները ծանոթացել են նաև ծրագրի ուսուցիչ-առաջնորդների ու շրջանավարտների պատմություններին ու իրականացրած ծրագրերին:

10. Էրազմուս+ կարողությունների զարգացման 7 նորընտիր ծրագրերի մեկնարկային հանդիպում- Հայաստանում Էրազմուս+ ազգային գրասենյակի նախաձեռնությամբ 2021թ. մարտի 17-18-ը իրականացվել է երկօրյա հանդիպում՝ նվիրված 2020թ. **Առաջարկների ներկայացման մրցույթում** հաղթած Էրազմուս+ կարողությունների զարգացման 7 նոր ծրագրերին: Հանդիպման նպատակն էր հնարավորություն ընձեռել նոր և փորձառու ծրագրային թիմերին կիսվելու կարողությունների զարգացման ծրագրերի իրականացման փորձով: Քանի որ հաղթող ճանաչված 7 ծրագրերից երկուսում ընդգրկված է նաև ԳՊՀ-ն, հանդիպմանը համալսարանից մասնակցում էին ծրագրային թիմերի անդամները:

11. The Crowdfunding formula ընկերության ներկայացուցիչների հետ հանդիպում- 2021 թ. մարտի 16-ին ԳՊՀ-ն հյուրընակել է ընկերության մարդկային ռեսուրսների կառավարման թիմի անդամներին, որոնք հանդիպմանը ներկա ուսանողներին և համալսարանի աշխատակիցներին են ներկայացրել իրենց կազմակերպությունը, ինչպես նաև տեղեկացրել են ապրիլի 2-4-ը նախատեսվող երկօրյա կոնֆերանսի ու հմտությունների զարգացմանն ուղղված աշխատարանների մասին՝ նվիրված թվային մարքեթինգի և ծրագրավորման բոլոր հնարավորություններին, որոնք կարող է օգտագործել տարածաշրջանի երիտասարդությունը՝ միջազգային կազմակերպություններում հեռավար տարբերակով աշխատելու համար:

12. «Համալսարան-բիզնես համագործակցություն. նորարարություն և աշխատանքի վրա հիմնված ուսուցում» թեմայով կլաստերային հանդիպում- 2021 թվականի հունիսի 2-ին Երևանում՝ «Հոլիդեյ Ինն Էքսպրես» հյուրանոցում, Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակը և Գերմանական տնտեսական միավորումը կազմակերպել են «Համալսարան-բիզնես համագործակցություն. նորարարություն և աշխատանքի վրա հիմնված ուսուցում» թեմայով կլաստերային քննարկում, որին ԳՊՀ-ից մասնակցել է Ս. Ալավերդյանը: Հանդիպման նպատակն էր ներկայացնել և միավորել վերոնշյալ ոլորտների ծրագրերը՝ համեմատելու և գնահատելու արձանագրված ձեռքբերումները, բացահայտելու դրանց իրականացման ընթացքում առաջացած խոչընդոտները, ինչպես նաև նպաստելու լավագույն փորձի փոխանակմանը և բարձրացնելու դրանց տեսանելիությունն ու ազդեցությունը:

Աշխատակիցների և ուսանողների շարժունության խթանում: Հաշվետու ժամանակահատվածում բաժինը շարունակել է քայլեր ձեռնարկել՝ խթանելու ԳՊՀ աշխատակիցների և ուսանողների մասնակցությունը փոխանակման ծրագրերին: Այդ նպատակով բաժինը պարբերաբար գործող ծրագրերի պահանջների, ժամկետների և ընթացակարգերի վերաբերյալ հայտարարություն է տարածել ԳՊՀ պաշտոնական կայքի «Նորություններ» բաժնում, ինչպես նաև համալսարանի ֆեյսբուքյան էջում: Իրազեկող աշխատանքների շնորհիվ է, որ քննվող ժամանակահատվածում ուսանողները հատկապես ակտիվ դիմել են Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի հայագիտական ամբիոնի ու Հունգարիայի կառավարության հետ համատեղ առաջարկվող կրթաթոշակային ծրագրին և «Կոպեռնիկուս Բեռլին» կազմակերպության հայտարարած «Գերազանցության միջազգային կրթաթոշակ» մրցույթին: Մրցութային բոլոր փուլերը հաղթահարել, սակայն, հաջողվել է մեկ ուսանողի (Նելլի Իսախանյան, «Կառավարում» մասնագիտության 3-րդ կուրս), որը փոխանակման ծրագրով օգոստոս ամսին մեկնել է Գերմանիա՝ մեկ կիսամյակ ուսանելու: Անհրաժեշտ է ընդգծել, որ ԱԿՀ բաժինը աջակցել է կրթաթոշակային մրցույթներին դիմել ցանկացող բոլոր ուսանողներին պահանջվող փաստաթղթերը պատրաստելու հարցում:

Աշխատակիցների և ուսանողների շարժունության խթանման համար բաժինը հատուկ ուշադրություն է դարձրել Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակում միջհամալսարանական համաձայնագրերի կնքմանը՝ շարունակելով համագործակցության առաջարկներ ուղարկել ծրագրային և գործընկեր երկրների մի շարք համալսարաններ և արդեն

ունենք նախնական պայմանավորվածություններ Գրանադայի համալսարանի/Իսպանիա/ ու Բոնոյի Մենդելի համալսարանի/Չեխիա/ հաջորդ ուսումնական տարում շարժունության ծրագրեր իրականացնելու համար:

Էրազմուս+ ծրագրի շրջանակում կարողությունների զարգացմանը միտված ծրագրերի իրականացում: Էրազմուս+ ծրագրի 2014-2020 թթ. շրջափուլի շրջանակում **Կարողությունների զարգացման գործողության** վերջին առաջարկների մրցույթում հաղթած ծրագրերից երկուսում՝ «Ճարտարապետական ժառանգության կայուն զարգացման համար կարողությունների զարգացում» (SAH) և «Աջակցություն անգլերենի միջոցով դասավանդման նորարար մեթոդաբանությանը, մոտեցումներին և դասավանդման գործիքներին՝ կրթության արդյունավետությունը, շարունակականությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով» (SMARTI), Գորիսի պետական համալսարանը՝ որպես կոնսորցիումի անդամ, նույնպես ընդգրկվել է:

Հաշվետու ժամանակահատվածում բաժինը աշխատանքներ է տարել միջազգային այդ երկու ծրագրերով նախատեսված գործողությունները պատշաճ կերպով կյանքի կոչելու ուղղությամբ: Ստորև ներկայացված են ծրագրերի շրջանակում իրականացված գործողությունները:

1. **«Ճարտարապետական ժառանգության կայուն զարգացման համար կարողությունների զարգացում» (SAH)**
   - ✓ 2021 թ. փետրվարի 16-17-ը տեղի է ունեցել SAH ծրագրի մեկնարկային առցանց հանդիպումը: Միջոցառմանը մասնակցել են եվրոպական ծրագրային գործընկեր համալսարանների ներկայացուցիչներ Լ'Աքվիլայի համալսարանից (համակարգող, Իտալիա), Աախենի Ռեյնիշ-Վեստֆելիշեի տեխնիկական համալսարանից (Գերմանիա) ու Աթենքի ազգային տեխնիկական համալսարանից (Հունաստան), հայաստանյան գործընկեր հաստատություններից՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանից, Գորիսի պետական համալսարանից և Հայաստանի Հանրապետության ճարտարապետների պալատից, իրանական գործընկեր համալսարաններից՝ Թեհրանի համալսարանից և Թավրիզի իսլամական արվեստի համալսարանից, ռուսական գործընկեր հաստատություններից՝ Մոսկվայի ազգային հետազոտական պետական շինարարական համալսարանից, Կազանի ճարտարապետության և ճարտարագիտության պետական համալսարանից, Մ. Վ. Լոմոնոսովի անվան հյուսիսային (արկտիկական) դաշնային համալսարանից և Սամարայի պետական տեխնիկական համալսարանից: Երկօրյա հանդիպման առաջին օրը ներկայացվել են ծրագրի հիմնական նպատակները, նախատեսվող գործողությունները և ակնկալվող արդյունքները: Միջոցառման երկրորդ օրը քննարկվել են ծրագրի գործընկեր հաստատությունների միջև կնքվելիք համաձայնագրի կետերը, ֆինանսավարչական ու տեխնիկական և, ըստ աշխատանքային փաթեթների, աշխատանքային խմբերի կազմման հարցերը, ինչպես նաև իրականացվելիք գործողությունների և հետագա հանդիպումների ժամանակացույցը: ԳՊՀ-ից հանդիպմանը մասնակցել են ծրագրի աշխատանքային խմբի անդամներ՝ Ա. Ղուկասյանը, Ն. Սաֆարյանը, Ս.Պողոսյանը, Գ. Մինասյանը, Գ.Շաբունցը և Ս.Ալավերդյանը:
   - ✓ Որպես SAH ծրագրի **Աշխատանքային փաթեթ (ԱՓ) 1-ինի (Նախապատրաստում)** համա-համակարգող հաստատություն՝ ԳՊՀ-ն փաթեթի համակարգող մյուս հաստատության՝ Աախենի Ռեյնիշ-Վեստֆելիշեի տեխնիկական համալսարանի հետ մշակել են ճարտարապետական ժառանգության կայունության համար նոր տիպի ճարտարապետ-վերականգնողների կոմպետենցիաների և ուսուցման վերջնարդյունքների նախնական ցանկը, հարցումներ են իրականացրել (մշակվել են յոթ լեզուներով հարցաթերթիկներ) ասոցիացված անդամների, գործատուների ու շրջանավարտների շրջանում ընդհանուր և մասնագիտական կոմպետենցիաների և ուսուցման վերջնարդյունքների ու որակի վերաբերյալ, կատարել են համեմատական վերլուծություն գործընկեր հաստատություններում SAH կրթության վերաբերյալ, պատրաստել են ԱՓ 1-ինի նախնական արդունքների վերաբերյալ զեկույց:
   - ✓ **ԱՓ-3-ղի (Որակի պլան. որակի ապահովում և մոնիթորինգ)** շրջանակում 2021 թ. ապրիլի 12-ին կայացել է ***Որակի խորհրդի նիստ,*** որին ԳՊՀ-ից մասնակցել են Ն. Սաֆարանը և Գ.

Շաբունցը: Հանդիպմանը քննարկվել են ծրագրային գործողությունների որակի գնահատման վերաբերյալ հարցեր: Նիստից հետո մշակվել է *Որակի պլան*, որը ներառում է աշխատանքայի փաթեթների շրջանակում իրականացվող աշխատանքների որակի գնահատման ցուցիչները:

- ✓ 2021 թ. հուլիսի 8-ին **ԱՓ 2-րդի (Զարգացում)** շրջանակում տեղի է ունեցել առցանց աշխատաժողով: ԳՊՀ-ից հանդիպմանը մասնակցել են ծրագրի աշխատանքային խմբի անդամներ Ն. Սաֆարյանը, Ս.Պողոսյանը, Գ. Մինասյանը, Գ. Շաբունցը և Ս.Ալավերդյանը: Աշխատաժողովի առաջին մասում անդրադարձ է արվել «Բակալավրիական և մագիստրոսական ծրագրերի ինստիտուցիոնալացում և հաստատում Ռուսաստանում, Հայաստանում և Իրանում» և «ՈԱ-ն ուսումնական պլանների նախագծման գործընթացում» թեմաներին: Աշխատաժողովի երկրորդ մասը մեթոդական սեմինար էր և նախատեսված էր ռուսաստանյան ու հայաստանյան բուհերի թիրախային խմբերի և ուսումնական պլանների ու մոդուլների մշակման մեջ ներգրավված անձնակազմերի համար:
- ✓ Ծրագրային գործողությունների իրազեկման նպատակով **ԱՓ 4-րդի (Արդյունքների իրազեկում և կայուն զարգացում)** շրջանակում մշակվել է *Իրազեկման պլան*, բաժինը պատրաստել է թռուցիկներ և ազդագիր, աջակցել է ծրագրային կայքի ստեղծման աշխատանքներին, իսկ 2021 թ. հուլիսի 1-ին Գորիսի պետական համալսարանում գումարված գիտական խորհրդի նիստի շրջանակներում ԱԿՀ բաժնի ղեկավար Ն. Սաֆարյանը գիտական խորհրդի անդամներին ծանոթացրել է ծրագրի նպատակներին, հիմնական խնդիրներին, աշխատանքային փաթեթներին, ծրագրերում ԳՊՀ-ի դերին և հետագա անելիքներին՝ այդպիսով խթանելով ներքին շահակիցների ներգրավվածությունը ծրագրում:

2. **Աջակցություն անգլերենի միջոցով դասավանդման նորարար մեթոդաբանությանը, մոտեցումներին և դասավանդման գործիքներին՝ կրթության արդյունավետությունը, շարունակականությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով (SMARTI)**

- ✓ 2021 թ. մարտի 31-ից ապրիլի 1-ը տեղի է ունեցել SMARTI ծրագրի մեկնարկային առցանց հանդիպումը: Միջոցառմանը մասնակցել են եվրոպական ծրագրային գործընկեր համալսարանների ներկայացուցիչներ Դրեզդենի տեխնիկական համալսարանից (համակարգող, Գերմանիա), Լիվերպուլի Ջոն Մուրսի անվան համալսարանից (Միացյալ Թագավորություն), Պորտուգալիայի կաթոլիկ համալսարանից (Պորտուգալիա) և Ռիգայի տեխնիկական համալսարանից (Լատվիա), հայաստանյան գործընկեր հաստատություններից՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայից, Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանից, Հայաստանի ազգային ագրարային համալսարանից, «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամից, Գորիսի պետական համալսարանից, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամից, և ռուսական գործընկեր հաստատություններից՝ Մորդովիայի Ն. Պ. Օգարևի անվան պետական համալսարանից, Իրկուտսկի ազգային գիտատեխնիկական համալսարանից, Կազանի դաշնային համալսարանից, Պետրոզավոդսկի պետական համալսարանից, «Ռուսական ռեգիստր» սերտիֆիկացման ասոցիացիայից: Եռօրյա հանդիպման ընթացքում սահմանվել են ծրագրի նպատակը, խնդիրները, սպասվելիք արդյունքները, ներկայացվել են աշխատանքային հինգ փաթեթների համար պատասխանատու թիմերը, քննարկվել են ծրագրի շրջանակներում կատարվելիք աշխատանքները, ճշգրտվել են ժամկետները, հստակեցվել ֆինանսական և տեխնիկական հաշվետվությունների ներկայացման պահանջները: ԳՊՀ-ից հանդիպմանը մասնակցել են ծրագրի աշխատանքային խմբի անդամներ Ն. Սաֆարյանը, Ս.Ալավերդյանը, Լ. Աթաբեկյանը, Ն. Մեժլումյանը, Գ. Մինասյանը և Գ.Շաբունցը:
- ✓ ԱՓ 1-ինի շրջանակում իրականացվել է ոլորտի հետազոտություն ռուսաստանյան և հայաստանյան բուհերում անգլերենի՝ որպես դասավանդման միջոցի, ուսանողակենտրոն ուսուցման, դասախոսների հմտությունների և դրանց զարգացման

մասին: Հետազոտության հիման վրա մշակվել են զեկույցներ, որում ամփոփվել են խնդրո առարկա հարցերի շուրջ երկու երկրների բուհերում արձանագրված իրողությունները: Դասավանդման մեթոդոլոգիաների վերաբերյալ ԵՄ լավագույն փորձը նույնպես հավաքագրվել է, մշակվել է առանձին զեկույց, որում խոսվում է վերոնշյալ երեք հարցերի մասին, սակայն ԵՄ լավագույն փորձի դիտանկյունից:

- ✓ **ԱՓ-3-րդի (Որակի ապահովում)** շրջանակում կազմվել է *Որակի ապահովման ռազմավարություն՝* որակի ներքին ապահովման չափորոշիչներով, որը հիմնված է որակի ներքին գնահատման աշխատանքային խմբի կողմից մշակված առաջընթացի ցուցիչների վրա:
- ✓ Ծրագրային գործողությունների իրագեկման նպատակով **ԱՓ 4-րդի (Իրազեկում)** շրջանակում ԳՊՀ-ն՝ որպես փաթեթի համահամակարգող, մասնակցել է *Իրազեկման պլանի* մշակման գործընթացին, պատրաստել է թռուցիկներ և ազդագիր, աջակցել է ծրագրային կայքի ստեղծման աշխատանքներին, ֆեյսբուքյան և թվիթերյան հարթակներում բացել է ծրագրային էջեր, իսկ 2021 թ. հուլիսի 1-ին Գորիսի պետական համալսարանում գումարված գիտական խորհրդի նիստի շրջանակներում ԱԿՀ բաժնի ղեկավար Ն. Սաֆարյանը գիտական խորհրդի անդամներին ծանոթացրել է ծրագրի նպատակներին, հիմնական խնդիրներին, աշխատանքային փաթեթներին, ծրագրերում ԳՊՀ-ի դերին և հետագա անելիքներին՝ այդպիսով խթանելով ներքին շահակիցների ներգրավվածությունը ծրագրում:

ԳՊՀ պաշտոնական կայքում ԱԿՀ բաժնի գործունեության լուսաբանում, օտարալեզու տեղեկատվության ծավալի մեծացմանն ուղղված քայլերի ձեռնարկում:

ԱԿՀ բաժինը, կարևորելով և պատշաճ ուշադրության արժանացնելով իր գործունեության լուսաբանումը, շարունակել է համագործակցել ԳՊՀ հանրային կապերի և լրատվության բաժնի հետ: Իր գործունեությունը ներքին և արտաքին շահակիցների՝ աշխատակիցների, ուսանողների, շրջանավարտների և լայն հասարակության համար առավել թափանցիկ ու հասանելի դարձնելու նպատակով գործարկվել են տարաբնույթ միջոցներ:

- Բաժնի գործունեության լուսաբանման, թափանցիկության ապահովման ամենամատչելի և ամենակարևոր միջոցներից մեկը ԳՊՀ պաշտոնական կայքն է (www.gorsu.am), որի «Նորություններ» բաժնում հրապարակվել են արտաքին կապերին և համագործակցությանն առչվող ամենաթարմ տեղեկությունները, իսկ «Արտաքին կապերի և համագործակցության բաժին» հատվածում տրվել են ընդհանրական տեղեկություններ բաժնի և Էրազմուս+ ծրագրի շրջանակում իրականացվող գործողությունների (ՀԳ 1, ՀԳ 2) մասին: Համալսարանի կայքում օտարալեզու տեղեկության տարածման նպատակով բաժինը ինչպես նախկինում, այնպես էլ այժմ համագործակցել է ԳՊՀ «Ազգերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողների և Օտար լեզուների ամբիոնի դասախոս, ռուսերենի մասնագետ Լարիսա Իվանյանի հետ:
- Համալսարանում բաժնի կողմից իրականացվող կամ այլ հաստատությունների հետ համագործակցության շրջանակում ծրագրված միջոցառումների, դասընթացների, ծրագրերի մասին տեղեկությունը զետեղվել է նաև ԳՊՀ ֆեյսբուքյան պաշտոնական էջում:
- Համալսարանի ներքին և արտաքին շահակիցներին բաժնի գործունեության մասին տեղեկացնելու համար պարբերաբար կազմակերպվել են իրազեկող հանդիպումներ:
- Իրազեկման աշխատանքներ տարվել են նաև ԳՊՀ ֆակուլտետի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի նիստերին:
- Երկու մասնաշենքի տեսանելի հատվածներում պարբերաբար թարմացվել են հայտարարությունների ցուցանակները, փակցվում են ազդագրեր:

ԱԿՀ բաժնի ղեկավար՝ Նաիրա Սաֆարյան

15.12.2021թ.